

խանները Գարդմանայ երկրին կը պատկանէին, Հայկազեան Եռանշահիկներուն: Միհրանէն վերջ՝ իր յաջորդներէն Վարդան կ'երեւայ թէ ինքիները եւ իր իշխանութիւնը վտանգուած տեսաւ Հայկազեան Եռանշահիկներէն, եւ թէ եւ ինք փեսայացեալ էր Արմիհրն Եռանշահիկի, այսուհանդերձ եւ հակառակ, իրեն տրուած ՔԱՁՆ տիտղոսին՝ Վարդան իր մօտ ճաշի կը հրաւիրէ Եռանշահիկ տոհմին 60 գլխաւորները եւ զանոնք զաւով կը սպաննէ, անտարակոյս վախնալով բացէ ի բաց անոնց դէմ մարտնչելէ: Եռանշահիկ Ամիրհն միայն կ'ազատի այս դաւազորութենէն:

Հայկազեանց Եռանշահիկներէն զաւով սպաննուած այս 60 գլխաւորները անտարակոյս բոլորն ալ արքայիկներ չէին, այլ կը պատկանէին Աղուանից արքայական այգ տոհմին: Այդպէս հասկցած է նաեւ Ալպոյաճեան: «Առանշահ Աղուանից թագաւոր կը նշանակէ, եւ մեր պատմիչները ցեղի վերածած են Աղուանից թագաւորութիւնը բազմաթիւ մասերու վերածուած տեսնելով»:

«Այս պարագային՝ Աղուանից արքայական հին տոհմը հասկնալու է»⁽¹⁰⁾:

Արմիրհ Եռանշահիկը անգամ մը կը յիշուի եւ ասկէ վերջ երկար ատեն Եռանշահիկի յիշատակութեան չենք հանդիպիր: Պէտք է մինչեւ Սահլ, այսինքն մինչեւ 821 թուականը դանք, որպէսզի դարձեալ հանդիպինք Եռանշահիկի:

Սահլ Սմբատեան Եռանշահիկը՝ թոյլմայ Արծրունիի քով կը յիշուի իրր «Սահլ (տպագրուած Մահլ) Սմբատայ որդի»՝ (էջ 310): Դժբախտաբար այլուր չկրցայ հանդիպիլ Սահլի հօր անուան Սմբատ ըլլալուն: Արծրունի եւ Արար պատմիչները Սահլ որդի Սմբատի (Սահլ իպն Մնբատ) ըսելով՝ մի գուցէ ըսել կ'ուզեն Սահլ Սմբատեան, ինչպէս որ Կաղանկատուացին կը նշանակէ: Սակայն ասիկա չի նշանա-

կեր որդի Սմբատի, այլ Սմբատեան կոչուած ընտանեկան ճիւղէ մը:

Աղուանից վրայ Արարացուց կատարած մէկ արշաւանքին ատեն Կաղանկատուացի Սմբատ մը կը յիշատակէ 725 թուականին դիմաց: «Ի սմին ժամանակի զՋուանշիր իշխան Աղուանից սպանին Ամեթեզուքն: Եւ ի նոյն ամի մեռաւ Սմբատ Հայոց իշխանն, եւ եղեւ տարին սով խիստ, որ էր թիւ Հայոց հարիւր եօթանասուն եւ հինգ» (էջ 368): Տարակոյս չկայ որ թուականը 725 կամ 726 ըլլայ, քանի որ երկիցս այդ երեք չորս տողերուն մէջ կը կրկնուի: Ոչ ալ կարելի է այս Սմբատ Հայոց իշխանը նոյնացնել Աղուանիցի դուրս Հայ իշխանի մը հետ: Ես կը խորհիմ որ մեռած Սմբատ Հայոց իշխանը՝ Եռանշահիկ Հայկազեան իշխանն էր Աղուանից Շաքէոյ եւ Մեծիրանից կողմերուն: Սահլ Սմբատեանց հաւանաբար թոռն էր այս Սմբատին, որմէ ժառանգած ըլլալու էր Սմբատեան մականուան հետ եւ Եռանշահիկ տիտղոսը⁽¹¹⁾:

Կաղանկատուացիի շարունակողը կը գրէ. «Ստուգարանութեամբ այսպէս ծանեաք. - ընդ Հայկազեանց արանց ինամաւորիլ Միհրական տոհմին, եւ պատուաստութեամբս այսուիկ զոյգ ունել ըզպետութիւն արեւելից կողմանցս Աղուանից» (էջ 386): Ասով պէտք է հասկնալ որ Հայկազեանց արանքը Եռանշահիկներուն համար էր, որոնք Միհրանայ տան հետ ինամիհանալով՝ կերպով մը ենթակայ եղան անոնց զերիշխանութեան: Միհրական տոհմին կը պատկանէր Ջուանշիր Աղուանից իշխանը որ սպաննուեցաւ 725ին, երբ այն կամ յաջորդ տարին մեռաւ Սմբատ Հայոց իշխանն ալ, որ Եռանշահիկ նկատեցի: Այս Եռանշահիկները դոնէ մեզի

(10) Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրէ, 1950, էջ 171, ծանօթ. 1:

(11) Հ. Ալիշան Սիւսիկանի մէջ, էջ 15, Սմբատ Եռանշահիկ մը կը յիշէ, որուն կը վերադրէ սակայն Բարակի կալանաւորութիւնը: Որոշ է որ Հ. Ալիշան վրիպակի մը ենթակայ է եւ Սահլ Սմբատեան Եռանշահիկը նշանակած է Սմբատ Առանշահիկ: